ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 132/10

Քաղ.Երեւան **30 հուլիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա. Բաբայան Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. հուլիսի 30-ի նիստում (արձանագրություն N82/1) քննարկեց «Belgioioso Cheese, Inc.» ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Է. Նահապետյանի 2010թ. հունիսի 15-ի «BELGIOIOSO» (IR 957353) բառային ապրանքային նշանի կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Հիմք ընդունելով «ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման» կարգի 57-րդ կետի երկրորդ պարբերությունը՝ նիստը ղեկավարեց Բողոքարկման խորհրդի նախագահի կողմից նշանակված Բողոքարկման խորհրդի անդամ՝ Ա. Խաչիկյանը:

Կրկնական փորձաքննության մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետը և նույն կետի «գ» ենթակետը, ինչպես նաև «Ապրանքային եւ սպասարկման նշանների հայտերի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման» Կարգի 90.1, 90.8 կետերը, համաձայն որոնց որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չեն այն նշանները, որոնք չունեն տարբերակող հատկություն կամ բաղկացած են միայն այնպիսի տարրերից, որոնք նշում են ապրանքի տեսակը, որակը, քանակը, հատկությունները, արժեքը, ստեղծման նպատակը, ինչպես նաև ապրանքի արտադրության և իրացման տեղն ու ժամանակը:

Ստորեւ ներկայացված են բողոքարկողի փաստարկները:

Բողոքում նշված է, որ «BELGIOIOSO» (IR 957353) նշանը համարվում է ամբողջ աշխարհում հայտնի բրենդ պանրի արտադրման բնագավառում և երկարատև օգտագործման շնորհիվ ձեռք է բերել տարբերակիչ հատկություն: Դրա վառ ապացույցն է «BELGIOIOSO» պանրի ստեղծման պատմությունը: «BELGIOIOSO» պանրի արտադրությունը սկսվել է դեռեւս ավելի քան մեկ դար առաջ Իտալիայում: 1979թ. Էորիկո Աուրիչիոն՝ «BELGIOIOSO» պանրի հիմնադրի ծոռը, Իտալիայից ընտանիքով տեղափոխվել է Ամերիկա, որտեղ էլ հիմնել է պանրի արտադրությունը՝ օգտագործելով «BELGIOIOSO» անվանումը որպես տոհմական նշան: Նրա

նպատակն է եղել ստեղծել բարձրակարգ պանիրներ, որոնք կառանձնանան իրենց յուրօրինակ տեսքով ու համով, և դա նրան միանգամայն հաջողվեց: Արդյունքում ստեղծվեց «BELGIOIOSO» պանրի արտադրման մի ամբողջ հոսքագիծ, որտեղ պանիրները պատրաստվում էին ամենաթարմ կաթից իրական սկզբնական բաղադրատոմսով: «BELGIOIOSO» մակնիշմամբ պանիրների առանձնահատկություններից է նաև այն, որ դրանք պատրաստելիս անկյունները չեն կտրվում, որի հետևանքով յուրաքանչյուր «BELGIOIOSO» պանիր իր յուրօրինակ տեսքն ունի, ինչի շնորհիվ էլ դրանք առանձնանում և ճանաչվում են շուկայում պանիրների բազմազանության մեջ: Ուստի չի կարելի ասել, որ այդ բառը նկարագրական է և նշում է ապրանքի տեսակը, որակը կամ հատկությունը: Այն պարզապես կոչված է անվանելու արտադրողի կողմից ստեղված պանրի կոնկրետ այդ տեսակը, ինչպես, օրինակ, սիգարետի մի տեսակը կոչվում է MARLBORO, մյուսը՝ VIRGINIA, կամ կոնֆետի մի տեսակը կոչվում է «БЕЛОЧКА», մյուսը «МИШКА НА СЕВЕРЕ» և այլն:

Բողոքարկողը նշում է, որ պանիրների յուրաքանչյուր տեսակ ունի իր պատրաստման տեխնոլոգիան և առանձնահատկությունը բնորոշ այն տեղանքին, որտեղից այն ծագել է: Ինչ վերաբերում է «BELGIOIOSO» պանրին, ապա դա պանրի այն տեսակն է, որի գաղտնիքը և առանձնահատկությունը կայանում է դրա իտալական հին բաղադրատոմսի մեջ, որի ստեղծող հիմնադիրն է հայտատու Էրրիկո Աուրիչիոյի նախապապը: Ի տարբերություն այլ պանիրների, տվյալ պանրի տեսակն արտադրողը հենց ինքը հիմնադիր ընկերությունն է, որը «BELGIOIOSO» անվամբ նշում և առանձնացնում է կոնկրետ պանրի տեսակն իր կողմից արտադրվող այլ պանիրներից, որի ձևի ու համի յուրօրինակության մասին արդեն նշվեց: Ուստի և այն չի կարելի համարել, օրինակ «Ռոքֆոր», «Չանախ» կամ «Լոռի» պանիրների նման համընդհանուր տեսակ, որոնց ծագման մասին մեզ տեղեկություններ են հասել հին ավանդությունների միջոցով, այսինքն պանիրների իրական ստեղծողը հայտնի չէ: Այսօր դրանց պատրաստման տեխնոլոգիան կիրառվում է բազմաթիվ ընկերությունների կողմից պանրի արտադրության մեջ, և որոնք հետևաբար չեն կարող գրանցվել որևէ սուբյեկտի անունով: Բողոքարկողը նշում է, որ այլ հարց է «BELGIOIOSO» անվանման հետ, որը համընդհանուր կիրառում չունի, քանի որ այն արտադրվում է միմիայն հիմնադիր ընկերության կողմից և մակնշվում վերջինիս կողմից ընտրած ապրանքանիշով: Հետևապես, այն ճանաչվում է միայն որպես Աուրիչիոների տոհմական նշանով մակնշված արտարդրանք և պետք է գրանցվի միայն հիմնադիր ընկերության անունով: Նման օրինակ է «XEROX» նշանը, որը թեպետ և համընդհանուր ճանաչում ու կիրառում ունի և դարձել է տվյալ ապրանքը, այն է՝ պատճենահանող սարքը բնութագրող բառ, սակայն գրանցված է միայն հիմնադիր ընկերության անունով: Մեկ այլ օրինակ է FINLANDIA նշանը, որը տվյալ դեպքում ընկալվում է ոչ թե որպես աշխարհագրական անվանում, այլ տվյալ օղու առանձնահատուկ թորման և պատրաստման տեխնոլոգիան մակնշող տարբերակիչ անվանում, որի նկատմամբ բացառիկ իրավունքները պատկանում են միայն FVW ընկերությանը:

Բողոքարկողը նշում է, որ «BELGIOIOSO» ապրանքային նշանի դեպքում կարելի է ասել, որ նշանն ունի տարբերակող հատկություն տասնյակ տարիների ընթացքում որպես Աուրիչիոների կողմից ստեղծված յուրատեսակ պանիրը անվանելու և հանրությանը հայտնի դառնալու շնորհիվ,

և չի նշում ապրանքի և ոչ մի տեսակ, որակ, քանակ կամ արտադրման վայր, քանի որ «BELGIOIOSO» բառը որպես պանրի անվանում օգտագործելը արտադրող ընկերության մտահղացումն է: Եվ եթե «Լոռի» կամ «Ռոքֆոր» պանիրների տեսակները դարձել են համընդհանուր օգտագործվող այն պարզ պատճառով, որ դրանց կոնկրետ ստեղծողը հայտնի չէ, ապա «BELGIOIOSO» պանրի դեպքում և՛ ստեղծողը, և արտադրողը, և արտադրման այլ մանրամասներ հայտնի են սպառողին թ՛ե Ինտերնետի և թ՛ե տեղեկատվական այլ աղբյուրների միջոցով որպես կոնկրետ արտադրողի պանիր:

Որպես ամփոփում բողոքի, նշված է, որ «BELGIOIOSO» անվանումը պանրի արտադրության մեջ բարձր որակի և յուրօրինակ տեսակի գրավական է և շարունակում է մնալ ամբողջ աշխարհում բարձր գնահատական և համբավ վայելող նշան, և «BELGIOIOSO» բառի հանդես գալը որպես ապրանքային նշան արդեն սպառողին հուշում է պանրի արտադրման բնագավառում աշխարհահռչակ բրենդի բարձրակարգ դրսևորումներից մեկը լինելու մասին: Ուստի և դրա իրավական պաահպանումը չափազանց կարևոր է հիմնադիր ընկերության համար, որը ձգտում և հետևում է նրան, որ իր կողմից ստեղծված նշանը չդառնա համընդհանուր օգտագործման առարկա:

Բողոքարկողը խնդրում է հաշվի առնելով վերը նշված փաստարկները՝ վերանայել կրկնական փորձաքննութան որոշումը և պահպանություն ընձեռել «BELGIOIOSO» ապրանքային նշանի IR 957353 միջազգային գրանցմանը Հայաստանի Հանրապետության տարածքում հայտարկված դասի բոլոր ապրանքների նկատմամբ:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշվեց, որ 2010 թվականի փետրվարի 26-ի կրկնական փորձաքննության որոշմամբ մերժել է «Errico Auricchio» ընկերության «BELGIOIOSO» IR 957353միջազգային գրանցման տարածումը Հայաստանի Հայաստանում, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «BELGIOIOSO»–ն հանդիսանում է իտալական պանրի տեսակ և չի կարող գրանցվել որևէ սուբյեկտի կողմից: Սակայն փորձաքննության դիրքորոշումը չի բավարարել վերոհիշյալ հայտատուին եւ խնդրել է վերանայել այն: Նշվեց նաեւ, որ «BELGIOIOSO» IR 957353 ապրանք ային նշանը ներկայացնող հայտատուի անունը փոխվել է, այն է՝ «Belgioioso Cheese, Inc.», որը եւ հիմք է ծառայում նշված ապրանքային նշանի գրանցման համար:

Ընդհանուր քննարկման արդյունքում կոլեգիան հանգել է այն եզրակացության, որ բողոքում նշված փաստարկները համապատասխանում են ճշմարտությանը եւ առաջարկեց բողոքը բավարարել:

Ընդհանուր քննարկման արդյունքում հիմք ընդունելով վերոգրյալը եւ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Belgioioso Cheese, Inc.» ընկերության բողոքը ամբողջությամբ եւ գրանցել «BELGIOIOSO» (IR 957353) ապրանքային նշանը:

Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումը ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա. Ազիզյան